

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎ՝ ՇԵՐԻՖ ԼԻ ՊԱԶԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՋ

Ուրբաթ, Փետրուար 24-ի երեկոյեան, ժողով մը տեղի ունեցաւ հրաւերովը Լոս Անճելըսի ոստիկանապետ Լի Պաքայի: Ժողովին նպատակն էր քննարկել երիտասարդութիւնը յուզող եւ մտահոգող հարցեր:

Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, ժողովին ներկայ եղան Գերայ. Տ. Միւռն Օ. Վրդ. Ազնիկեան, Արժ. Տ. Աշոտ քիւյ. Գամպուրեան եւ Chaplain Րաֆֆի Կարապետեան: Ներկայ էին նաեւ Առաքելական եւ Աւետարանական համայնքի ներկայացուցիչներ:

Արծարծուած հարցերու լուծումներուն կարգին նշուեցան հետեւեալ երեք հիմնական թելադրութիւնները:

Առաջին, եկեղեցիներէն ներս հովիւներ մօտէն հետաքրքրուին խնդրայարոյց պարագաներով եւ ջանան երիտասարդները դէպի բնականոն կեանք առաջնորդել, բարոյական օրէնքներու եւ քրիստոնեական արժէքներու վերադարձնելով գիրենք:

Երկրորդ, ոստիկանութեան սպասարկութիւնը պատրաստ է այս մարզին մէջ օգտակար հանդիսանալու թէ՛ դպրոցականներուն եւ կարիքներուն համապատասխան խորհրդատուներ տրամադրելու:

Հաղորդուեցաւ, որ այս բաժանմունքը ունի յատուկ ծրագիր մը, որուն միջոցով կրնան օժանդակել ընկերային հարցեր դիմագրաւող երիտասարդներուն ու նպաստել անոնց բնականոն կեանքի վերադարձի: Այս ծրագրին մասին բաժանմունքը պատրաստ է ծանօթութիւններ փոխանցել մեր քահանաներուն եւ պատասխանատուներուն, որպէսզի անոնք ալ, իրենց կարգին, կարենան օգտակար ըլլալ նման կացութիւններ դիմակալող երիտասարդներուն:

## MEETING REGARDING YOUTH ISSUES AT SHERIFF LEE BACA'S OFFICE

On the evening of Friday, February 24 a meeting took place by the invitation of Los Angeles Sheriff Lee Baca. The purpose of the meeting was to examine issues that concern the youth.

Under the direction of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Ashod Kambourian, and Chaplain Rafi Garabedian were present at the meeting. Also present were representatives of the Apostolic and Evangelical communities.

Three suggestions transpired from the meeting.

First is for the parish priests to be more involved and make an effort to lead the youth on the path to an orderly life, one that is guided by ethics and Christian values.

Second, the police force is ready to be of assistance in these matters by providing counselors to both students and to anyone else who may be in need.

Finally, it was communicated that this department has a special program through which they help with social issues that confront the youth and assist them in returning to a normal life. This group can pass along information and expertise to priests and responsible parties so that they too can be helpful to other youth in similar situations.